

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13/6

7 ապրիլի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Հասմիկ Գալստյանի 18.03.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 13.03.2015 թ-ի թիվ 6104128 ակտի դեմ:

#### Ա/Ձ Հասմիկ Գալստյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ Ֆինանսների նախարարության Կապանի ՏՀՏ պետի 06.03.2015 թ-ի թիվ 6104128 հանձնարարագրով Ա/Ձ Հասմիկ Գալստյանի մոտ 06.03.2015 թ-ից մինչև 06.03.2015 թ-ը կատարվել է հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում հղում կատարելով ՀՀ Ֆինանսների նախարարության ԽՀՎ ՀՏ պետի 19.02.2015 թ-ի թիվ 6206775 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության թիվ 6206775 արձանագրությանը և «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի 170.8 հոդվածին, կազմվել և Ա/Ձ Հասմիկ Գալստյանին է ներկայացվել 13.03.2015 թ-ի թիվ 6104128 ակտը:

1. Ակտով արձանագրվել է, որ Ա/Ձ Հասմիկ Գալստյանը խախտել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.1 և 9.2 հոդվածներով սահմանված պահանջները: Հղում է կատարված նաև ՀՀ ՖՆ ԽՀՎ ՀՏ պետի 19.02.2015 թ-ի թիվ 6206775 հանձնարարագրով իրականացված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում կազմված թիվ 6206775 արձանագրությանը, որում ևս որպես խախտում շեշտված է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.1 հոդվածը:

Հարկ է նշել, որ Ա/Ձ Հասմիկ Գալստյանի կողմից նշված օրենքի 9.1 հոդվածը նույնիսկ առերևույթ չի կարող խախտվել, քանի որ այդ հոդվածով դրոշմապիտակներով պարտադիր դրոշմավորման պահանջ սահմանված է օրենքով սահմանված ապրանքները ներմուծողների կամ արտադրողների համար: Մինչդեռ Ա/Ձ Հասմիկ Գալստյանը չի հանդիսանում ակտով արձանագրված ապրանքատեսակների (ՀՀ-ում արտադրված ապրանքներ) արտադրող: Այսինքն, վարչական մարմինն առերևույթ փորձել է ապահովել «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի համապատասխան հոդվածի կիրառության հիմնավորումը որպես խախտում, շեշտելով նաև «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2 հոդվածը, ինչը առնվազն կատարված հղումների տեսանկյունից իրավաչափ և հիմնավորված չէ:

2. Վարչական մարմինը լիարժեք և համապարփակ չի դիտարկել օրենքի կիրարկումը՝ անտեսելով «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-20-Ն օրենքով սահմանված անցումային դրույթները:

Այսպես, վարչական ակտով որպես հիմնավորում հղում է կատարվել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-20-Ն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներին, առ այն, որ 2015 թ. արտադրված՝ «ԱՏԳԱԱ 1602 ապրանքային խմբին դասվող ապրանքները և արտադրողի կողմից ենթակա են պարտադիր դրոշմապիտակավորման, և դրանց օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է»: Մինչդեռ, հիշյալ կետով օտարման ցանկացած փուլի մասով այդպիսի դրույթ սահմանված չէ:

Ավելին, համաձայն նույն հոդվածի 6-րդ կետի, անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող պարտադիր դրոշմավորման ենթակա՝ ԱՏԳ ԱԱ

1602 ապրանքային խմբին դասվող ապրանքներ իրացնող անձանց կողմից մինչև 2015 թ-ի հոկտեմբերի 1-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրվում է մինչև 2016 թ-ի մարտի 31-ը ներառյալ: Այլ կերպ ասած, այս կետի ուժով անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող անձանց մասով չի դիտարկվում ապրանքների արտադրության ժամկետը և պետք է դիտարկվի միայն դրանց՝ մինչև 2015 թ-ի հոկտեմբերի 1-ը ձեռք բերված լինելու հանգամանքը:

3. Եվ ընդհանրապես, անկախ վերոնշյալ ժամկետներից «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2 հոդվածը օրենքով սահմանված ապրանքների օտարման մասով կիրառելի է այն դեպքերում, եթե այդ ապրանքներն արտադրողի կամ այլ փաթեթավորողի կողմից փաթեթավորված (չափաձրարված) կամ այլ կերպ տարայավորված են նույն փաթեթավորմամբ ու ապրանքային տեսքով, առանց քաշը (ծավալը) փոփոխելու, մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար:

Ակնհայտ է, որ Օրենքի նշված դրույթը վերաբերում է ստանդարտ (անփոփոխ) քաշով (ծավալով)՝ չափը մակնշված փաթեթավորմանը: Ուստի չստանդարտացված, ուղղակիորեն հիգիենիկ կամ այլ չափորոշիչների պահպանման համար վակուումային փաթեթավորումը չի կարող դիտարկվել սույն հոդվածի ներքո, առավել ևս, եթե վաճառքն իրականացվում է փաստացի կշռելով: Դա հետևում է նաև նույն օրենքի 9.4 հոդվածի 4-րդ կետի պահանջներից, համաձայն որի դրոշմավորված ապրանքի վրա պետք է փակցված լինի այդ ապրանքի տարողությանը (ծավալին, քաշին կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորին) համապատասխանող դրոշմապիտակ: Այլ կերպ ասած, դրոշմապիտակը պետք է համապատասխանի կոնկրետ ծավալի կամ քաշի, ինչը դիտարկվող դեպքում կիրառելի չէ:

Ինչ վերաբերում է փաստացի կշռելով վաճառքին, ապա դա հիմնավորվում է և ակտին կից ներկայացվող ապրանքների լուսապատճենների վրա փակցված՝ տվյալ կշռին համապատասխանող գումարի վերաբերյալ պիտակով, և հսկիչ գնման արձանագրությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Հասմիկ Գալստյանը խնդրում է ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 13.03.2015 թ-ի թիվ 6104128 ակտը չեղյալ համարել:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ ԽՀՎ ՀՏ պետի 19.02.2015 թ-ի թիվ 6206775 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Հասմիկ Գալստյանի մոտ իրականացվել է հսկիչ գնում: Արդյունքում, 20.02.2015 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6206775 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

գլխավոր հարկային տեսուչ Արմեն Սիմոնյանի կողմից ս.թ. փետրվարի 20-ին, ժամը 12:30-ին Ա/Ձ Հասմիկ Գալստյանին պատկանող ք.Երևան, Կոմիտաս 38 52 հասցեում գտնվող խանութից կատարել է հսկիչ գնում 1970 դրամ արժողությամբ՝ հերմետիկ փաթեթավորված բաստուրմա 0.164 կգ 1 հատ, 1 կգ 12000 դրամ, որի դիմաց վճարված կանխիկ գումարը մուտքագրվել է ՀԴՄ և տրամադրվել է համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն: Ուսումնասիրությունն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Գնված ապրանքը դրոշմավորված չի եղել պարտադիր դրոշմավորման ենթակա դրոշմապիտակով: Խախտվել են «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.1 հոդվածի պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ պետի կողմից 06.03.2015 թ-ին հրապարակվել է թիվ 6104128 հանձնարարագիրը, որի համաձայն Ա/Ձ Հասմիկ Գալստյանի մոտ իրականացվել է հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 13.03.2015 թ-ի թիվ 6104128 ակտը (այսուհետ նաև Ակտ):

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ՀՀ ՖՆ ԽՀՎ ՀՏ պետի 19.02.2015 թ-ի թիվ 6206775 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման արդյունքում կազմված արձանագրության համաձայն, Ա/Ձ Հասմիկ Գալստյանին պատկանող խանութում առկա են եղել պարտադիր դրոշմապիտակավորման ենթակա չդրոշմապիտակավորված ապրանքներ (ԱՏԳ ԱԱ 1602 ապրանքյին դասվող հերմետիկ փաթեթավորված բաստուրման): Ա/Ձ Հասմիկ Գալստյանը խախտել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.1 և 9.2 հոդվածների պահանջները, այսինքն՝ Ա/Ձ Հասմիկ Գալստյանն իրացրել է պարտադիր դրոշմապիտակավորման ենթակա չդրոշմապիտակավորված ապրանքներ:

Ակտով արձանագրվածի վերաբերյալ հարկ է մեջբերել հետևյալ իրավանորմերի դրույթները.

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-20-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 11.09.2014 թ-ին) 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա՝ ԱՏԳ ԱԱ 1602, 1604, 1605, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2209 00 ապրանքային խմբերին դասվող ապրանքներ իրացնող անձանց կողմից մինչև 2015 թվականի հոկտեմբերի 1-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրվում է մինչև 2016 թվականի մարտի 31-ը ներառյալ»:

Իր հերթին, նշված օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով սահմանված աղյուսակի համաձայն, 1602 ապրանքային խմբին դասվող ապրանքներ են հանդիսանում պատրաստի կամ պահածոյացված մթերքներ մսից, մսի ենթամթերքներից կամ արյունից պատրաստված ապրանքները:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Հասմիկ Գալստյանը չի հանդիսացել անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող, իսկ նրա կողմից իրացված ԱՏԳ ԱԱ 1602 ապրանքային խմբին դասվող ապրանքները ձեռք են բերվել մինչև 2015 թվականի հոկտեմբերի 1-ը: Հետևապես, Ա/Ձ Հասմիկ Գալստյանի կողմից մինչև 2016 թվականի մարտի 31-ը ԱՏԳ ԱԱ 1602 ապրանքային խմբին դասվող դրոշմապիտակներով չդրոշմավորված ապրանքների իրացումը չի կարող դիտվել որպես «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.1 և 9.2 հոդվածների, ինչպես նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.8 հոդվածի պահանջների խախտում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ու մ է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 13.03.2015 թ-ի թիվ 6104128 ակտը:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**